

Ֆինանսական վիճակի մասին հաշվետվություն

հազ. դրամ	Ծնթ.	2011թ.	2010թ.	2009թ.
ԱԿՏԻՎՆԵՐ				
Ոչ ընթացիկ ակտիվներ				
Հիմնական միջոցներ	13	108,298	116,790	10,144
Հետաձգված ակտիվներ	14	5,464	9,276	8,310
Ընդամենը ոչ ընթացիկ ակտիվներ		113,762	126,066	18,454
Ընթացիկ ակտիվներ				
Պաշարներ	15	677,117	607,142	618,688
Տրամադրված փոխառություններ	16	32,827	-	-
Տրված կանխավճարներ	16	110,903	59,037	111,123
Առևտրային և այլ դեբիտորական պարտքեր	16	275,376	235,607	391,966
Դեբիտորական պարտքեր բյուջեին	16	16,626	2,514	8,141
Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ	17	11,361	212,849	24,062
Այլ ընթացիկ ակտիվներ	18	1,822	1,190	5,566
Ընդամենը ընթացիկ ակտիվներ		1,126,032	1,118,339	1,159,546
Ընդամենը ակտիվներ		1,239,794	1,244,405	1,178,000
ՍԵՓԱԿԱՆ ԿԱՊԻՏԱԼ ԵՎ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ				
Սեփական կապիտալ				
Կանոնադրական կապիտալ	19	50	50	50
Զբաղիված շահույթ		54,989	26,060	28,096
Ընդամենը սեփական կապիտալ		55,039	26,110	28,146
Ոչ ընթացիկ պարտավորություններ				
Բանկային վարկեր և փոխառություններ	20	928,238	1,093,746	892,284
Ընդամենը ոչ ընթացիկ պարտավորություններ		928,238	1,093,746	892,284
Ընթացիկ պարտավորություններ				
Ստացված բանկային վարկեր		-	-	37,789
Ստացված փոխառություններ	20	199,611	46,816	-
Առևտրային և այլ կրեդիտորական պարտքեր	21	54,200	77,065	217,766
Կրեդիտորական պարտք բյուջեին	21	706	668	2,015
Պահուստներ		2,000	-	-
Ընդամենը ընթացիկ պարտավորություններ		256,517	124,549	257,570
Ընդամենը պարտավորություններ		1,184,755	1,218,295	1,149,854
Ընդամենը սեփական կապիտալ և պարտավորություններ		1,239,794	1,244,405	1,178,000

Տնօրեն
Հովհաննես Ազիզյան

Որակավորված հաշվապահ վկ N 0663
Նունե Իսահակյան

Համապարփակ ֆինանսական արդյունքների մասին հաշվետվություն

հազ. դրամ	Ծնթ.	2011թ.	2010թ.
Հասույթ	5	1,022,928	1,164,146
Վաճառքի ինքնարժեք	6	(741,999)	(933,549)
Վարչական ծախսեր	7	(76,755)	(92,696)
Իրացման ծախսեր	8	(32,123)	(6,130)
Այլ եկամուտներ	9	8,126	24
Այլ ծախսեր	10	(18,022)	(17,075)
Գործառնական գործունեության արդյունքները		162,155	114,720
Ֆինանսական եկամուտ		-	-
Ֆինանսական ծախսեր	11	(118,574)	(104,415)
Արտարժույթի փոխարժեքային տարբերությունից ծախս	11	(5,320)	(1,956)
Հահույթ/(վնաս) մինչև շահութահարկով հարկումը		38,261	8,349
Հահութահարկի գծով (ծախս)/եկամուտ	12	(9,332)	(10,385)
Տարվա շահույթ/(վնաս)		28,929	(2,036)
Այլ համապարփակ ֆինանսական արդյունք			
Հիմնական միջոցների վերագնահատում		-	-
Տարվա այլ համապարփակ եկամուտ՝ առանց շահութահարկի		-	-
Ընդամենը համապարփակ ֆինանսական արդյունք		28,929	(2,036)

Ֆինանսական հաշվետվությունները հաստատվել են Ընկերության ղեկավարության կողմից 2012թ. մարտի 21-ին:

Տնօրեն
Հովհաննես Ազիզյան

Որակավորված հաշվապահ՝ Վ. Ն. 0663
Նունե Իսահակյան



Համապարփակ ֆինանսական արդյունքների մասին հաշվետվությունը պետք է դիտարկվի 9-ից 28-րդ էջերում ներկայացված ֆինանսական հաշվետվությունների բաղկացուցիչ մասը կազմող ծանոթագրությունների հետ մեկտեղ:

Սեփական կապիտալում փոփոխությունների մասին հաշվետվություն

հազ. դրամ	Բաժնետիրական կապիտալ	Հիմնական միջոցների վերագնահատման պահուստ	Զբաղիչված շահույթ	Ընդամենը
Մնացորդը առ 1 հունվարի 2010թ.	50	-	28,096	28,146
Տարվա վնասը	-	-	(2,036)	(2,036)
Այլ համապարփակ եկամուտ	-	-	-	-
Հիմնական միջոցների վերագնահատում՝ առանց հարկերի	-	-	-	-
Ընդամենը համապարփակ ֆինանսական արդյունք	-	-	26,060	26,060
Վճարված շահաբաժիններ	-	-	-	-
Մնացորդը առ 31 դեկտեմբերի 2010թ.	50	-	26,060	26,110
Մնացորդը առ 1 հունվարի 2011թ.	50	-	26,060	26,110
Տարվա շահույթ/վնաս	-	-	28,929	28,929
Ընդամենը համապարփակ ֆինանսական արդյունք	-	-	28,929	28,929
Մնացորդը առ 31 դեկտեմբերի 2011թ.	50	-	54,989	55,039

Տնօրեն

Հովհաննես Ազիզյան

Որակավորված հաշվապահ՝ Վկ N 0663

Նունե Իսահակյան



Սեփական կապիտալում փոփոխությունների մասին հաշվետվությունը պետք է դիտարկվի 9-ից 28-րդ էջերում ներկայացված ֆինանսական հաշվետվությունների բաղկացուցիչ մասը կազմող ձևաթղթերի հետ մեկտեղ:

Դրամական միջոցների հոսքերի մասին հաշվետվություն

հազ. դրամ	2011թ.	2010թ.
Դրամական միջոցների հոսքեր գործառնական գործունեությունից		
Հաճախորդներից ստացված դրամական միջոցներ	1,154,850	1,389,053
Մատակարարներին վճարված դրամական միջոցներ	(969,816)	(994,845)
Աշխատակիցներին վճարված դրամական միջոցներ	(37,039)	(35,800)
Հարկերի գծով վճարումներ	(133,585)	(160,536)
Այլ ստացված վճարումներ	5,236	24
Այլ վճարումներ	(1,075)	(2,630)
Գործառնական գործունեությունից ստացված/(օգտագործված) զուտ դրամական միջոցների հոսքեր	18,571	195,266
Դրամական միջոցների հոսքեր ներդրումային գործունեությունից		
Ոչ նյութական ակտիվներից վաճառքից մուտքեր	656	-
Ոչ նյութական ակտիվներից ձեռք բերումից ելքեր	(826)	-
Ֆինանսական ակտիվներով գործառնություններից մուտքեր	138,188	146,816
Ֆինանսական ակտիվներով գործառնություններից ելքեր	(342,343)	(342,986)
Ներդրումային գործունեությամբ օգտագործված զուտ դրամական միջոցներ	(204,325)	(196,170)
Դրամական միջոցների հոսքեր ֆինանսավորման գործունեությունից		
Փոխառություններ և վարկեր (զուտ)	104,253	297,956
Վճարված շահաբաժիններ և տոկոսներ	(118,574)	(104,415)
Ֆինանսավորման գործունեությամբ (օգտագործված)/ստացված զուտ դրամական միջոցներ	(14,321)	193,541
Դրամական միջոցների և դրանց համարժեքների զուտ (նվազում)/աճ	(200,075)	192,637
Արտարժույթի փոխարժեքի փոփոխման ազդեցությունը դրամական միջոցների և դրանց համարժեքների վրա	(1,413)	(3,850)
Դրամական միջոցները և դրանց համարժեքները ժամանակաշրջանի սկզբի դրությամբ	212,849	24,062
Դրամական միջոցները և դրանց համարժեքները ժամանակաշրջանի վերջի դրությամբ (ժամոթագրություն 17)	11,361	212,849

Տնօրեն
Հովհաննես Ազոցյան



Որակավորված հաշվապահ պ. Վ. 0663
Նունե Իսահակյան

Անկախ աուդիտորական եզրակացություն

«ՎԵՍՏ ՊԼԱՍՏ ԳՐՈՒՊ» Սահմանափակ Պատասխանատվությամբ Ընկերության մասնակիցներին

Մենք իրականացրել ենք «ՎԵՍՏ ՊԼԱՍՏ ԳՐՈՒՊ» Սահմանափակ Պատասխանատվությամբ Ընկերության (այսուհետ՝ «Ընկերություն»)՝ կից ներկայացվող ֆինանսական հաշվետվությունների աուդիտը, որոնք ներառում են 2011թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ ֆինանսական վիճակի մասին, նույն ամսաթվին ավարտված տարվա համապարփակ ֆինանսական արդյունքների, սեփական կապիտալում փոփոխությունների և դրամական միջոցների հոսքերի մասին հաշվետվությունները, ինչպես նաև հաշվապահական հաշվառման քաղաքականության ամփոփ նկարագիրը և այլ պարզաբանող ծանոթագրություններ:

Ֆինանսական հաշվետվությունների համար տնօրինության պատասխանատվությունը

Տնօրինությունը պատասխանատու է սույն հաշվետվությունների՝ Ֆինանսական Հաշվետվությունների Միջազգային Ստանդարտներին համաձայն պատրաստման և արժանահավատ ներկայացման համար: Այդ պատասխանատվությունը ներառում է խարդախության կամ սխալի հետևանքով առաջացած էական խեղաթյուրումներ չպարունակող ֆինանսական հաշվետվությունների պատրաստման և իրական ներկայացման նկատմամբ ներքին վերահսկողության մշակումը, կիրառումը և պահպանումը, պատշաճ հաշվապահական հաշվառման քաղաքականության ընտրությունը և կիրառումը, ինչպես նաև տվյալ հանգամանքներում ողջամիտ հաշվապահական գնահատումների կատարումը:

Աուդիտորի պատասխանատվությունը

Մեր պատասխանատվությունը իրականացված աուդիտի հիման վրա սույն ֆինանսական հաշվետվությունների վերաբերյալ կարծիք արտահայտելն է: Մենք աուդիտն իրականացրել ենք Աուդիտի Միջազգային Ստանդարտներին համապատասխան: Այս ստանդարտները պահանջում են, որպեսզի մենք պահպանենք աուդիտորի վարքագծի նկատմամբ պահանջները, և աուդիտը պլանավորենք և իրականացնենք այնպես, որպեսզի ձեռք բերենք ողջամիտ երաշխիք, առ այն որ ֆինանսական հաշվետվությունները, ամբողջությամբ վերցրած, զերծ են էական խեղաթյուրումներից:

Աուդիտը ներառում է ֆինանսական հաշվետվություններում ներկայացված գումարների և բացահայտումների վերաբերյալ աուդիտորական ապացույցների ձեռքբերմանն ուղղված ընթացակարգերի իրականացում: Ընթացակարգերի ընտրությունը հիմնված է աուդիտորի դատողությունների վրա, ներառյալ՝ խարդախության կամ սխալի հետևանքով ֆինանսական հաշվետվությունների էական խեղաթյուրման ռիսկի գնահատումը: Այս ռիսկերը գնահատելիս աուդիտորը հաշվի է առնում Ընկերության ֆինանսական հաշվետվությունների պատրաստման և արժանահավատ ներկայացման ապահովմանն ուղղված ներքին վերահսկողությունը, ինչը թույլ է տալիս մշակել տվյալ հանգամանքներին համապատասխանող աուդիտորական ընթացակարգեր, սակայն ոչ Ընկերության ներքին վերահսկողության արդյունավետության մասին կարծիք արտահայտելու նպատակով: Աուդիտը ներառում է կիրառվող հաշվապահական հաշվառման քաղաքականության համապատասխանության և տնօրինության կատարած հաշվապահական գնահատումների հիմնավորվածությունը, ինչպես նաև ֆինանսական հաշվետվության ներկայացման ընդհանուր գնահատումը:

Մենք համոզված ենք, որ մեր կողմից ձեռք բերված աուդիտորական ապացույցները պատշաճ և բավարար հիմք են հանդիսանում մեր աուդիտորական կարծիքն արտահայտելու համար:

Վերապահումով դրական կարծիքի հիմք


Մենք ճանաչվել ենք որպես Ընկերության աուդիտոր 2012թ. մարտի 19-ին և այդպիսով չենք հետևել 2011թվականի տարեվերջի պաշարների փաստացի գույքագրմանը: Մենք ի վիճակի չենք եղել այլընտրանքային միջոցներով համոզվել 2011թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ պաշարների առկա քանակության վերաբերյալ: Հաշվի առնելով, որ պաշարների սկզբնական մնացորդները մասնակցում են ֆինանսական արդյունքների և դրամական հոսքերի որոշմանը՝ մենք ի վիճակի չենք որոշելու, թե արդյոք անհրաժեշտ կլինեին ճշգրտումներ հաշվետու տարվա շահույթի առնչությամբ՝ համապարփակ ֆինանսական արդյունքների մասին հաշվետվության մեջ և գործառնական գործունեությունից զուտ դրամական հոսքերի առնչությամբ՝ դրամական հոսքերի մասին հաշվետվության մեջ:

Վերապահումով դրական կարծիք

Մեր կարծիքով, բացառությամբ վերապահումով դրական կարծիքի հիմքում նկարագրված հարցի հնարավոր ազդեցության, ֆինանսական հաշվետվությունները բոլոր էական առումներով տալիս են ճշմարիտ և իրական պատկերը Ընկերության ֆինանսական վիճակի առ 31-ը դեկտեմբերի 2011թ., ինչպես նաև այդ ամսաթվին ավարտված տարվա նրա համապարփակ ֆինանսական արդյունքների և դրամական հոսքերի վերաբերյալ՝ համաձայն ֆինանսական Հաշվետվությունների Միջազգային Ստանդարտների:

11 մայիսի 2012թ.

Վահագն Համբարձումյան
Տնօրեն
Աուդիտոր



Գայանե Խաչատրյան
Աուդիտի Ղեկավար
Աուդիտոր



«Աուդիտ Սըփորթ Արմենիա» ՓԲԸ

Երևան, Եր. Քոչարի 23/1

